ՏԵՂԵԿԱՆՔ

«Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի լրացվող և փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ազգային ֆիլմ՝** սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված պայմանները բավարարող ֆիլմ.

2) **աջակցող՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն անհատույց դրամական միջոցներ է հատկացնում ֆիլմերի ստեղծման, տարածման և պահպանման նպատակով՝ առանց այդ գործընթացներին միջամտելու և գույքային իրավունքներ ձեռք բերելու.

3) **դասակարգում՝** ֆիլմի տարբերակում՝ ըստ դիտողների տարիքային սահմանափակման չափորոշիչների.

4) **դրամագլուխ՝** անձեռնմխելի կապիտալ, որը ձևավորվում կամ համալրվում է պետական բյուջեից և աջակցողների կողմից կատարվող հատկացումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին.

5) **ենթագրում՝** ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի կամ մեկնաբանություն պարունակող տեքստի արտածում կադրում.

6) **լիամետրաժ ֆիլմ՝** 52 րոպե և ավելի տևողություն ունեցող ֆիլմ.

7) **կարճամետրաժ ֆիլմ՝** մինչև 52 րոպե տևողություն ունեցող ֆիլմ.

8) **կինեմատոգրաֆիա՝** մշակույթի և արվեստի ոլորտ, որը ներառում է ֆիլմի ստեղծման, տարածման, ցուցադրման հետ կապված մասնագիտական, ստեղծագործական, արտադրական, տեխնիկական, գիտական և կրթական գործունեության ամբողջությունը.

9) **կինոթատրոն՝** համապատասխան տեխնիկական միջոցներով էկրանի վրա 50 և ավելի դիտողների համար ֆիլմի ցուցադրման մեկ կամ ավելի սրահ ունեցող վայր.

10) **կինոժառանգություն՝** ժառանգված, պահպանված, հաջորդ սերունդներին փոխանցվող և հանրային սեփականություն հանդիսացող ֆիլմի հիմնանյութը, ֆիլմի բնօրինակը կամ դրա պատճենը, ֆիլմի ստեղծման համար անհրաժեշտ պարագաները (բեմադրական իր, կահույք, հագուստ, սարք, սարքավորում, առարկա, կառույց), շարժական և անշարժ գույքը.

11) **կինոռեեստր՝** ազգային ֆիլմերի վիճակագրական հաշվառումը կազմակերպելու նպատակով ստեղծված տվյալների հիմնապահոց.

12) **կինոտարեգրություն՝** փաստավավերագրական նյութ, որում ժամանակագրական կարգով արտացոլված է իրողությունների կամ փաստերի հաջորդական պատկերը՝ այն հետագայում օգտագործելու նպատակով.

13) **կինոփառատոն՝** մեկ և ավելի անվանակարգերում ընտրված ֆիլմերի ցուցադրման նպատակով մրցութային կամ ոչ մրցութային ծրագրով և հաստատված կանոնակարգով անցկացվող միջոցառում.

14) **կրկնօրինակում՝** ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսքի վանկավոր արտասանության համաժամանակյա թարգմանության հնչյունագրում.

15) **համատեղ արտադրություն՝** սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում նշված պայմանները բավարարող ֆիլմարտադրություն.

~~16) **հավաստագիր՝** ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.~~

17) **ձայնային ներկայացում՝** տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ֆիլմի դրվագների հակիրճ բանավոր նկարագրություն.

~~18) **մատակարար՝** ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայություններ մատուցող՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսավարող սուբյեկտ.~~

~~19) **նվազագույն շահավետ գին՝** տնտեսապես հիմնավորված նվազագույն գին, որով պետության գնային կարգավորման բացակայության դեպքում մատակարարի կողմից կմատուցվեր ծառայությունը.~~

20) **շահառու՝** Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած տնտեսավարող սուբյեկտ, որին, սույն օրենքի համաձայն, հատկացվում է ֆինանսավորում.

21) **ստեղծագործական խումբ՝** ֆիլմի ստեղծմանը մասնակցող աշխատախումբ, այդ թվում՝ սցենարի հեղինակ, բեմադրող կամ գլխավոր ռեժիսոր, բեմադրող կամ գլխավոր օպերատոր, բեմադրող կամ

գլխավոր նկարիչ, երաժշտության հեղինակ, հնչյունային ռեժիսոր, մոնտաժի ռեժիսոր, մոնտաժող, անիմատոր, զգեստների նկարիչ, նկարիչ, դիմահարդար, առաջին, երկրորդ և երրորդ դերի դերասաններ.

22) **վարձութային վկայական՝** ֆիլմի բնօրինակը, դրա պատճենը կամ օրինակները շրջանառության մեջ դնելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.

23) **տնտեսավարող սուբյեկտ՝** կինեմատոգրաֆիայի ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

23.1) ***ներդրումների մասնակի վերադարձ (cashback)՝*** *ֆիլմարտադրողների կողմից << ռեզիդենտ անձանցից, այդ թվում՝ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրական շահառու հանդիսացող անձանցից, ձեռք բերված ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների և ծառայությունների համար կատարված դրամական ծախսերի մասնակի հետ վերադարձ.»:*

24) **Ֆիլմ՝** ստեղծագործական խմբի համատեղ գործունեությամբ ստեղծագործական մտահղացման հիմքի վրա ստեղծված, կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված և համապատասխան տեխնիկական միջոցներով հանրությանը ներկայացնելու համար նախատեսված տեսալսողական ստեղծագործություն.

25) **Ֆիլմ հանձնակատար՝** Հայաստանի Հանրապետության՝ որպես ֆիլմարտադրության համար բարենպաստ երկրի, գրավչությունը խթանելու և տարածելու, ինչպես նաև ֆիլմարտադրության տարբեր փուլերում ֆիլմարտադրողներին աջակցություն ցուցաբերելու գործառույթներ իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

26) **Ֆիլմ տարածող (դիստրիբյուտոր)՝** ֆիլմի տարածումն իրականացնող տնտեսավարող սուբյեկտ.

27) **Ֆիլմ ցուցադրող՝** ֆիլմի ցուցադրումը կազմակերպող տնտեսավարող սուբյեկտ.

28) **Ֆիլմարտադրող՝** ստեղծագործական խմբի հետ կնքված պայմանագրերի հիման վրա ֆիլմի նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներ ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտ, որը նախաձեռնում է ֆիլմարտադրությունը և պատասխանատվություն կրում դրա համար.

29) **Ֆիլմարտադրություն՝** ստեղծագործական խմբի ներգրավմամբ, տեխնիկական և այլ միջոցների օգտագործմամբ ֆիլմ ստեղծելու նպատակով ֆիլմարտադրողի կողմից իրականացվող գործունեություն.

30) **Ֆիլմի բնօրինակ՝** որակական չափանիշներով ֆիլմի հիմնանյութի ձևաչափին համապատասխանող ֆիլմի վերջնական հաստատված տարբերակի առաջին օրինակը.

31) **Ֆիլմի հիմնանյութ՝** նեգատիվ, հակատիպ, տեսահնչյունագրի, երաժշտության, ձայնային համադրման ու մագնիսային հնչյունագրերի բնօրինակը, վերստուգիչ պատճենը և նյութական կրիչի վրա պահվող ու ֆիլմի պահպանման և վերարտադրման համար անհրաժեշտ այլ նյութեր.

32) **Ֆիլմի նախագիծ՝** ֆիլմի ստեղծման վերաբերյալ փաստաթղթերի ամբողջություն, որի հիման վրա ընդունվում է ֆիլմարտադրության կամ դրա ֆինանսավորման մասին որոշում.

33) **Ֆիլմի պահպանություն՝** ֆիլմի հիմնանյութերի, ֆիլմի բնօրինակի կամ դրա պատճենի և ֆիլմի նախագծի երկարաժամկետ պահպանմանը, պահպանվածության ապահովմանն ու վերականգնմանն ուղղված գործունեություն.

34) **Ֆիլմի տարածում (դիստրիբյուցիա)՝** ֆիլմը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու գործընթաց.

35) **Ֆիլմի ցուցադրում՝** ֆիլմի հրապարակային ցուցադրում կինոթատրոնում, հեռարձակում հաղորդալարով (ներառյալ մալուխային կապը) կամ առանց հաղորդալարի (ներառյալ հեռուստատեսային կամ արբանյակային կապը):

Հոդված 5. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն ու ձևերը

1. Կինեմատոգրաֆիայի պետական աջակցության նպատակներն են՝

1) կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացումը.

2) ազգային ֆիլմերի ստեղծումը, տարածումն ու պահպանումը.

3) կրթական, գիտական և տեղեկատվական համակարգերի զարգացումը.

4) համատեղ արտադրության խթանումը.

5) կինոժառանգության և կինոտարեգրության պահպանումը.

6) օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության ձևերն են՝

1) ներդրումների իրականացումը և երաշխիքների տրամադրումը.

«1.1) ֆիլմարտադրության մեջ ներդված դրամական միջոցների մասնակի վերադարձը.»

2) աջակցող ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը.

3) արտադրական և տեխնիկական անհրաժեշտ պայմանների ապահովումը.

4) կինոարվեստին հաղորդակցվելու մատչելի պայմանների ստեղծումը.

5) ֆինանսավորման բարենպաստ պայմանների ապահովումը.

6) ֆիլմերի ստեղծման, տարածման և պահպանման ֆինանսավորումը.

7) կինոփառատոների և կինոարվեստի այլ միջոցառումների ֆինանսավորումը.

8) կինոարվեստի միջոցառումներին մասնակցության ապահովումը.

9) օրենքով չարգելված այլ աջակցություն:

Հոդված 7. Կառավարության լիազորությունները

1. Կառավարությունը՝

1) հաստատում է պետական բյուջեի միջոցների հաշվին կինեմատոգրաֆիայի ոլորտին ֆինանսավորում (այսուհետ՝ պետական ֆինանսավորում) տրամադրելու կարգը.

2) հաստատում է ֆիլմի առանձին կատեգորիաների պետական ֆինանսավորման մասնաբաժինները և սահմանաչափերը.

~~3) հաստատում է հավաստագիր տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու կարգը.~~

«3) հաստատում է ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու, մերժելու, դադարեցնելու և բողոքարկելու կարգն ու պայմանները.»:

4) հաստատում է համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու կարգը.

5) հաստատում է վարձութային վկայական տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու կարգը.

6) հաստատում է ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը.

7) հաստատում է դրամագլխին հատկացումներ կատարելու կարգը.

8) հաստատում է կինոռեեստրը վարելու և ազգային ֆիլմի փաստաթղթերը մշտական պահպանության հանձնելու կարգը.

9) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 8. Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները

1. Մշակույթի ոլորտում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին)՝

1) մշակում և իրականացնում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականությունը.

2) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերն ու հայեցակարգերը.

3) ապահովում է պայմաններ կինեմատոգրաֆիայի ոլորտի միջազգային համագործակցության զարգացման համար.

4) ապահովում է պայմաններ կինեմատոգրաֆիայի ոլորտի կրթական համակարգի զարգացման համար.

5) ապահովում է պայմաններ կինոարվեստի ստեղծագործության բոլոր տեսակների զարգացման համար.

6) ապահովում է պայմաններ ստեղծագործական ներուժի վերարտադրման, իրացման և երիտասարդ ստեղծագործողների լիարժեք ինքնադրսևորման համար.

7) ապահովում է պայմաններ կինոժառանգության և կինոտարեգրության պահպանման համար.

~~8) ուսումնասիրում է հավաստագիր տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և տրամադրում հավաստագիր.~~

«8) ազգային մարմնի ներկայացված ներդրումների մասնակի վերադարձի մասին եզրակացությունների և վերադարձը տրամադրելու հիմքերի ուսումնասիրության տվյալների հիման վրա որոշում է կայացնում վերադարձը տրամադրելու կամ մերժելու, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու և վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու մասին.»:

~~9) հաստատում է ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունների ցանկն ու նվազագույն շահավետ գների հաշվարկման նորմատիվները.~~

10) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտին պետական ֆինանսավորում հատկացնելու նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման կանոնակարգը.

11) հաստատում է կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի (այսուհետ՝ ազգային մարմին) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) անդամների և ազգային մարմնի գործադիր տնօրենի (այսուհետ՝ տնօրեն) ընտրության կարգն ու գնահատման չափանիշները.

12) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտի մասնագետների (այսուհետ՝ մասնագետ) գնահատման չափանիշները.

13) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 9. Ազգային մարմնի լիազորությունները

1. Ազգային մարմինը՝

1) ապահովում է շահերի բախման կառավարելիությունը.

2) ապահովում է կինոռեստրի ստեղծումը և դրա հետագա վարումը.

3) ապահովում է անձեռնմխելի կապիտալի արդյունավետ կառավարումը.

4) ապահովում է պետական ֆինանսավորման նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպումը և անցկացումը.

~~5) ապահովում է պետական բյուջեից և դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերահսկումը.~~

«5) իրականացնում է պետական բյուջեից և դրամագլխից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման մոնիտորինգ (մշադիտարկում).».

6) աջակցում է ազգային ֆիլմերի ստեղծմանը, տարածմանն ու պահպանմանը.

7) աջակցում է համատեղ արտադրության ֆիլմերի ստեղծմանը.

8) աջակցում է կինոարվեստի միջոցառումներին ազգային ֆիլմերի մասնակցությանը.

9) աջակցում է կինոժառանգության վերականգնմանն ու թվայնացմանը.

10) ուսումնասիրում է ազգային ֆիլմի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև այդ ընթացքում գովազդի տեղադրմամբ ստացված եկամուտների մասին տեղեկությունները և դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն.

11) ուսումնասիրում է համատեղ արտադրության կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերը, տրամադրում է համատեղ արտադրության կարգավիճակ և դադարեցնում կարգավիճակը.

12) ուսումնասիրում է վարձութային վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերը, տրամադրում է վարձութային վկայական և դադարեցնում դրա գործողությունը.

«12.1. ուսումնասիրում է ներդումները մասնակի վերադարձնելու, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, նաև՝ վերադարձը պետական բյուջե հետգանձելու կամ ներդրումների մասնակի վերադարձը դադարեցնելու և վերադարձված ֆինանսական հատկացումը պետական բյուջե հետգանձելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, դրանց վերաբերյալ տալիս է եզրակացություն լիազոր պետական մարմնին՝ համապատասխան որոշում կայացնելու համար.»:

13) իրականացնում է օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ 3
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ՏՆՕՐԵՆԸ

Հոդված 10. Ազգային մարմինը

1. Ազգային մարմինը Հայաստանի Հանրապետության հիմնադրած մշակութային հիմնադրամ է, որն ունի բացառիկ լիազորություններ պետական ֆինանսավորման նպատակով մրցույթներ (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպելու և անցկացնելու գործում:

2. Ազգային մարմինը հանդիսանում է աջակցող և չի կարող ձեռք բերել գույքային իրավունքներ իր կողմից կամ իր միջոցով ֆինանսավորված ֆիլմերի նկատմամբ, ինչպես նաև չի կարող իրականացնել ֆիլմարտադրության հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն ինքնուրույն կամ այլ տնտեսավարող սուբյեկտի միջոցով, որում ունի բաժնեմասնակցություն կամ հնարավորություն՝ կանխորոշելու վերջինիս կառավարման մարմինների որոշումները կամ էապես ազդելու նրանց որոշումների կայացման վրա:

«3. Ազգային մարմինը հանդիսանում է սույն օրենքով նախատեսված ֆիլմ հանձնակատարի գործառույթներ իրականացնող անձ:»:

~~ԳԼՈՒԽ 6~~
~~ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ~~

–

~~**Հոդված 18. Հավաստագրի տրամադրումը և դրա գործողության դադարեցումը**~~

~~1. Հավաստագիր ստանալու համար մինչև ֆիլմարտադրություն իրականացնելը ֆիլմարտադրողը լիազորված պետական մարմին է ներկայացնում՝~~

~~1) հավաստագիր ստանալու հայտը.~~

~~2) ֆիլմարտադրության ժամանակացույցը և ֆինանսավորման պլանը.~~

~~3) ֆիլմի նախահաշիվը և ֆինանսավորումը հավաստող փաստաթղթերը:~~

~~2. Հավաստագրի տրամադրման հայտը մերժվում է, եթե՝~~

~~1) ներկայացված տեղեկատվությունը արժանահավատ չէ.~~

~~2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.~~

~~3) ներկայացված փաստաթղթերը թերի են, և տեղեկացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, թերությունները չեն վերացվում.~~

~~4) ֆիլմարտադրողը նախկինում խախտել է օրենքով սահմանված պահանջները:~~

~~3. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝~~

~~1) ներկայացվել են ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.~~

~~2) խախտվել են սույն օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.~~

~~3) ներկայացվել է հավաստագրի գործողությունը դադարեցնելու դիմում:~~

~~4. Հավաստագիրը տրամադրում և դրա գործողությունը դադարեցնում է լիազորված պետական մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով:~~

«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԿԱՄ ԴՐԱ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՀԵՏԳԱՆՁՈՒՄԸ, ՀԱՄԱՏԵՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ»

1) 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 18. Ներդրումների մասնակի վերադարձի տրամադրումը, մերժումը, դադարեցումը, հետգանձումը**

1. Ֆիլմարտադրության նպատակով ներդրվող դրամական ծախսերի առնվազն քսան տոկոսը կարող է հետ վերադարձվել՝ եթե.

1) ֆիլմարտադրողը ներդրումները վերադարձնելու հայտով դիմել է Ազգային մարմին,

2) առկա են ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծախսերն հիմնավորող փաստաթղթերը,

3) ազգային մարմինը ներդրումների մասնակի վերադարձ տրամադրելու մասին իր դրական եզրակացությամբ դիմել է լիազոր պետական մարմին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վերադարձի ենթակա ծախսերում հաշվարկվող ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ցանկը սահմանում է Ազգային մարմինը՝ յուրաքանչյուր հայտի վերլուծության հիման վրա:

3. Ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսումներում չի հաշվարկվում սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դրամագլխի հաշվին տվյալ ֆիլմարտադրությանը հատկացված ֆինանսական միջոցների չափով կատարված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ծախսերը՝ առկայության դեպքում:

4. Ներդրումների մասնակի վերադարձ ստանալու հայտը մերժվում է, եթե՝

1) հայտնի են դարձել փաստեր, որոնք հավաստում են, որ ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին.

3) ներկայացված փաստաթղթերը թերի են, եւ տեղեկացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, թերությունները չեն վերացվում.

4) ֆիլմարտադրողը իր գործունեության ընթացքում ոչնչացրել կամ վնասել է պետության պահպանության տակ գտնվող պատմության կամ մշակույթի հուշարձանը, պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկան կամ փաստաթուղթը, հնագիտական օբյեկտները, խախտել է պետության կողմից հատուկ պահպանվող բնական տարածքի կամ օբյեկտի օրենսդրությամբ սահմանված ռեժիմը՝ առաջացնելով քրեական օրենսդրությամբ սահմանված խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս, կամ հրաժարվել է հատուցել հանրային կամ մասնավոր անձանց գույքին պատճառված վնասը կամ վերականգնել դրա նախկին վիճակը:

5. Ներդրումների մասնակի վերադարձը դադարեցվում, իսկ հատկացված միջոցները հետ է գանձվում պետական բյուջե, եթե ազգային մարմնի մշտադիտարկման կամ այլ հիմնավորված փաստերով բացահայտվում է, որ սույն հոդվածի առաջին մասով սահմանված վերադարձ ստացած (ստացող) ֆիլմարտադրողը.

1) ներկայացրել է ոչ հավաստի տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր.

2) խախտվել է սույն օրենքի եւ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները.

6. ֆիլմարտադրության աշխատանքների ընթացքում կատարել է ապօրինի գործողություն կամ այնպիսի գործողություն, որը հասցրել է գույքայի մասնակի կամ լրիվ ոչնչացման:

7. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրվում, մերժվում, դարադեցվում և պետական բյուջե է վերադարձվում լիազորված պետական մարմնի որոշումով՝ ազգային մարմնի եզրակացության կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

8. Ներդրումների մասնակի վերադարձը տրամադրելու չափը, հատկացման համամասնությունը և ժամկետները, վերադարձի ենթակա ծախսումները հիմնավորող փաստաթղթերի ցանկ ու ձևաչափը, ինչպես նաև վերադարձը մերժելու, դադարեցնելու և պետական բյուջե հետգանձում կատարելու (վերադարձնելու) և բողոքարկելու ընթացակարգերը սահմանվում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետով սահմանված Կառավարության որոշումով:»:

Հոդված 21. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցությունը

~~1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի ներդրում կատարելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ հավաստագիր և դրա հիման վրա մատակարարներից ձեռք բերել ֆիլմարտադրության հետ անմիջականորեն կապված ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով:~~

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմարտադրության նպատակով ներդրումներ կատարելու դեպքում ֆիլմարտադրողը կարող է ստանալ մասնակի վերադարձ՝ համաձայն սույն օրենքի 18-րդ հոդվածի դրույթների:».

~~*2. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մատակարարի չստացած (պակաս ստացած) եկամուտը փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Կառավարության սահմանած կարգով:*~~

3. Ֆիլմարտադրության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք իրավունք ունեն ֆիլմի նախագծով հաստատված ժամանակահատվածում առանց մուտքի վիզայի գտնվելու Հայաստանի Հանրապետության տարածքում և առանց աշխատանքի թույլտվության մասնակցելու ֆիլմարտադրության աշխատանքներին՝ Կառավարության սահմանած կարգով:

4. Ֆիլմարտադրության և կինոարվեստի միջոցառումների շրջանակներում ապրանքների ժամանակավոր ներմուծումն ու արտահանումն իրականացվում են մաքսային գործընթացների պարզեցված և արագացված ընթացակարգով՝ առանց մաքսային վճարների վճարման:

5. Պետական ֆինանսավորման շրջանակներում շահառուների անհատույց ստացված դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ դրանք կամ դրանցով ձեռք բերված կամ ստեղծված ակտիվները ճանաչվում են որպես ծախս:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ֆիլմ ցուցադրողների հարկման բազայի որոշման նպատակով եկամուտ չեն համարվում ազգային ֆիլմի հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև դրանց ընթացքում գովազդի տեղադրմամբ ստացվող եկամուտները:

Հոդված 28. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2030 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի ուժով ազգային ֆիլմեր են համարվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ստեղծված և սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պայմանները բավարարող ֆիլմերը:

3. Սույն օրենքի 10-23-րդ հոդվածների դրույթները գործելու են դրանք կանոնակարգող Կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

4. Մինչև սույն օրենքով սահմանված դրույթները կանոնակարգող Կառավարության որոշումների ու այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումը կինեմատոգրաֆիական գործունեության իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները կարգավորվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգով:

«4.1. Մինչև սույն օրենքով սահմանված Ազգային մարմնի կազմավորումը ներդրումների մասնակի վերադարձի տրամադրման, մերժման և այդ գործընթացի դադարեցման հետ կապված գործառույթներն իրականացնում է լիազորած պետական կառավարման մարմինը:»:

5. Սույն օրենքով նախատեսված՝ Կառավարության որոշումներն ու այլ նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ մեկ տարվա ընթացքում: